**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՆԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ (ՇԱՀԵ Ծ. ՎՐԴ.) ՍՈՍԻ**

# ՀՈՒԴԱՅԱՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՄԵԿՆԱՐՎԵՍՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ

**Թ.00.02 - «Փիլիսոփայության պատմություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2016**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ս. Ա. Զաքարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Հ. Քյոսեյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Օ. Ս. Վարդազարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. նոյեմբերի 2–ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ. 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. սեպտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքը նվիրված է վաղ քրիստոնեական փիլիսոփայության (Ա.-Գ. դդ.) վրա հուդայահելլենիստական մեկնարվեստի ունեցած ազդեցության մշակութային, կրոնափիլիսոփայական և սկզբնաղբյուրային առանձնահատկությունների

վերհանմանը: Վաղ քրիստոնեական փիլիսոփայությունն իր ձևավորման ու զարգացման առաջին շրջանից ունեցավ ազդեցությունների մի քանի ոլորտներ ու համատեքստեր, որոնցից առավել կարևորներից էին հուդայահելլենիզմն ու նրա մեկնարվեստը: Վերջիններիս ամենակարևոր յուրահատկությունն էր այն փաստը, որ, առաջացած լինելով հուդայական միաստվածության մեջ, դրանք, թեև ազդված էին անտիկ և հելլենիստական փիլիսոփայական ավանդույթներից, սակայն ուղղակիորեն հակադրվում էին հելլենիստական շրջանում ծաղկող բազմաստվածությանը: Այս իմաստով դրանք լավագույնս կարող էին հիմք ծառայել վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայական մտքի համար` դրա միջոցով ներմշակութայնացնելու և յուրացնելու հելլենիստական փիլիսոփայական մեկնարվեստի ավանդույթները: Ատենախոսության մեջ մասնավոր ակնարկ է արված տվյալ ժամանակաշրջանի հելլենիստական ու վաղ քրիստոնեական սկզբնաղբյուրներին, դրանց համադրմանն ու համատեքստային ուսումնասիրությանը:

Ի դարում կատարված հնագիտական, ձեռագրագիտական և աղբյուրագիտական նոր բացահայտումները, հուդայահելլենիստական փիլիսոփաների` քրիստոնյա տարբեր հեղինակների երկերում պահպանված պատառիկների ընթերցումը, մեկտեղումն ու հրատարակումը նոր թափ հաղորդեցին վաղ քրիստոնեական փիլիսոփայական մտքի հետ դրանց համեմատությանը: Մինչև այսօր էլ դեռ վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայության ու հուդայահելլենիստական մեկնարվեստի ուսումնասիրողները շարունակում են հետազոտությունները` կենտրոնանալով հատկապես հուդայահելլենիստական մեկնարվեստի ամենանշանավոր ներկայացուցչի` Փիլոն Ալեքսանդրացու` վաղ քրիստոնեական մտքի վրա թողած ազդեցության և հարակից հարցերի վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված է փիլիսոփայության պատմության ոլորտում վաղ քրիստոնեական փիլիսոփայության նկատմամբ նոր, առավել ամբողջական համապատկեր ունենալու հրամայականով: Ըստ այսմ, անհրաժեշտություն է առաջանում ընկալելու վաղ քրիստոնեական փիլիսոփայությունը իբրև հուդայահելլենիզմի` միաստվածյան փիլիսոփայական աշխարհայացքից ազդված նոր ձև, որը նույնպես յուրացրեց ու ներմշակութայնացրեց հելլենիստական փիլիսոփայությունը: Ատենախոսության մեջ այս իմաստով հուդայահելլենիստական փիլիսոփայության և վաղ քրիստոնեական մտքի զուգադրմամբ փորձ է արվում ներկայացնելու հուդայահելլենիստական փիլիսոփայությունն իբրև առանձին համակարգ, հելլենիստական փիլիսոփայության մեջ իր առանձին ու արժանի տեղն ունեցող փիլիսոփայական ավան-

դույթ: Հայ իրականության համար թեմայի արդիականությունը կարևորվում է այնքանով, որքանով միջնադարյան հայ կրոնափիլիսոփայության վրա ոչ պակաս կարևոր ազդեցություն են թողել հուդայահելլենիստական երկերից կատարված գրաբար թարգմանությունները: Ուստի և դրանց վերարժևորումն ու ուսումնասիրությունը ժամանակակից փիլիսոփայական և կրոնափիլիսոփայական մեթոդաբանության լույսի ներքո բնականաբար բերում է նաև հայ միջնադարյան փիլիսոփայական մտքի մեջ նրանց ունեցած դերի ու տեղի վերաիմաստավորմանը:

Գիտական մշակվածության աստիճանը: Հուդայահելլենիստական մեկնարվեստն իբրև հելլենիստական փիլիսոփայության առանձին արտահայտություն ուսումնասիրության նյութ է դարձել փիլիսոփայության պատմությամբ զբաղվող բազմաթիվ մասնագետների համար: Թեմային անդրադարձել են գերազանցապես եվրոպացի մասնագետներ՝ Ջ. Բոկաչինին, Ա.-Մ. Դենին, Ժ. Դորիվալը, Օ. Մյունիխը, Մ. Հառլը, Մ. Հենգելը, Դ. Թ. Ռունիան, Վ. Յագերը և այլք: Ռուս մասնագետների երկերում, սակայն, հուդայահելլենիզմն իբրև հելլենիստական փիլիսոփայության առանձին կրող, չի ուսումնասիրվել. Ա. Ա. Գրիցանովը, Վ. Պ. Լեգան, Վ. Վ. Վասիլևը, Վ. Ֆ. Ասմուսը, Ա. Ն. Չանիշևը, Ա. Լոսևը և ուրիշներ՝ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմությանը նվիրված իրենց մենագրություններում բավարարվում են միայն հուդայահելլենիստական առանձին հեղինակների մասին հպանցիկ տեղեկություններ հաղորդելով: Հայ իրականության մեջ այս թեմայի հանգամանալից ուսումնասիրությամբ զբաղվել է Օ. Վարդազարյանը՝ հիմնականում ծանրանալով հայ միջնադարյան մտքի վրա Փիլոն Ալեքսանդրացու ունեցած ազդեցության վերհանման վրա:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսությունը նվիրված է Ա.-Գ. դարերում զարգացող քրիստոնեական կրոնափիլիսոփայության վրա հուդայահելլենիստական մեկնարվեստի ազդեցության ոլորտների բացահայտմանը: Ուսումնասիրության խնդիրն է՝ հայ իրականության մեջ վերհանելու հուդայահելլենիստական փիլիսոփայության և մեկնարվեստի առավել ամբողջական պատկեր, իբրև հելլենիստական փիլիսոփայության պատմության մեջ անկախ ու ամբողջական միավոր, հստակեցնելու հուդայահելլենիստական մեկնարվեստի և վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայության առնչակցությունների պատմական, մշակութային, փիլիսոփայական ու մեկնողական ծալքերը, առկա սկզբնաղբյուրների ու նորահայտ հուդայահելլենիստական փիլիսոփայական երկերի լույսի ներքո ուրվագծելու հուդայահելլենիստական մեկնար-

վեստի ազդեցության սահմաններն ու ընդգրկումը վաղ քրիստոնեական փիլիսոփայության շրջանակում, և ի վերջո՝ պարզելու Ալեքսանդրյան քրիստոնեական կրոնափիլիսոփայական դպրոցի խաղացած դերը վաղ քրիստոնեական փիլիսոփայության պատմության մեջ՝ իբրև հուդայահելլենիստական մեկնարվեստի քրիստոնեական ժառանգորդի և շարունակողի: Այս նպատակով մանրամասն դիտարկվել են նաև Ալեքսանդրյան դպրոցի երկու հիմնական ներկայացուցիչների՝ Կղեմես Ալեքսանդրացու և Որոգինեսի կրոնափիլիսոփայական ժառանգությունը և նրանց կրած ազդեցությունը հուդայահելլենիստական հեղինակների երկերից: Ատենախոսության մեջ քննության հիմնական նյութ են դարձել նաև Բ. դարի քրիստոնյա հեղինակների երկերն ու փիլիսոփայական հայացքները, փորձ է արվել բացահայտելու հուդայահելլենիստական մեկնարվեստի հետ նրանց ունեցած աղերսները:

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունն իրականացնելիս հենվել ենք հուդայահելլենիստական մեկնարվեստի, հելլենիզմի մշակութային, կրոնական և փիլիսոփայական առանձնահատկությունների, վաղ քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման ու կայացման հիմնահարցերով զբաղվող արևմտաեվրոպական տեսաբանների աշխատությունների վրա, կիրառել ենք փիլիսոփայապատմական նյութի վերակազմության տարբեր մեթոդներ ու սկզբունքներ (փիլիսոփայական հոսանքների ու տեսությունների առաջացման համատեքստի ուսումնասիրություն, փիլիսոփայական երկերի թարգմանական առանձնահատկությունների քննարկում, կրոնափիլիսոփայական համակարգերի պատմական-տեսական համադրում և այլն), ինչպես նաև օգտագործել ենք թեմայի հետ կապված տարբեր աղբյուրագիտական հետազոտությունների արդյունքներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ ներկայացվում են վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայությունն ու հուդայահելլենիստական փիլիսոփայական մեկնարվեստը՝ իբրև առանձին և ինքնուրույն փիլիսոփայական ավանդույթներ: Թե՛ արտասահմանյան, թե՛ ռուս և թե՛ հայ մասնագիտական գրականության մեջ այս երկու համակարգերը դիտարկվել են լոկ որպես հելլենիզմի ու միջնադարյան փիլիսոփայական մտքի համատեքստում զարգացող ավանդույթներ՝ առանց դրանց ինքնուրույնությունն ու արժեքը վերհանող անհրաժեշտ շեշտադրումների:

-Հետազոտության մեջ առաջին անգամ երկու տարբեր փիլիսոփայական ավանդույթներ քննվում են համատեքստային մոտեցմամբ՝

ուսումնասիրելով առավելաբար դրանց ստեղծման համար իբրև հիմք ծառայած կրոնական, մշակութային և փիլիսոփայական համատեքստերը: Նման մոտեցումը թույլ է տալիս տվյալ ժամանակաշրջանի փիլիսոփայական մտքի պատմությունն ուսումնասիրելու ավելի լայն ու ընդհանուր շրջանակի մեջ` խուսափելով նաև փիլիսոփայական գաղափարների ու տեսությունների արհեստական նմանեցումից:

-Վաղքրիստոնեական փիլիսոփայության ուսումնասիրությունները շատ հաճախ դրա ազդեցության ու ներշնչման սկզբնաղբյուր են համարել բացառապես հրեական համատեքստն ու հուդայահելլենիստական փիլիսոփաների երկերը: Ատենախոսության մեջ առանձին ենթագլխով հիմնավորվում է այն միտքը, որ վաղ քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման ու կայացման գործում նշանակալից էր ոչ միայն հուդայահելլենիստական մեկնարվեստը, այլև հունահռոմեական փիլիսոփայությունն ու ճարտարվեստը:

- Մանրամասն ու առանձին կերպով քննվել է նաև հուդայահելլենիստական և վաղքրիստոնեական փիլիսոփայական ավանդույթների մեջ կարևոր դերակատարություն ունեցած անձնավորված Իմաստության գաղափարը, որին մինչ այդ եղած ուսումնասիրություններում հատկացվում էր երկրորդական կամ տեղական դերակատարություն: Հիմնավորվել է նաև «Լոգոսի» և անձնավորված Իմաստության գաղափարների խաղացած կարևորագույն դերը վաղքրիստոնեական փիլիսոփայության մեջ` իբրև հուդայահելլենիստական մեկնարվեստի ուղղակի ազդեցության արդյունք:

-Ա-Գ դարերի վաղքրիստոնեական փիլիսոփայության դիտարկումն առաջին անգամ կատարվել է մի շատ կարևոր հանգամանք հաշվի առնելով, որ է` հուդայահելլենիզմի և վաղքրիստոնեական փիլիսոփայության միաստվածյան բնույթը: Դրանով են ուշ հելլենիզմի շրջանում մնացած փիլիսոփայական հոսանքներից առանձնացել հուդայահելլենիստական և վաղքրիստոնեական փիլիսոփայական համակարգերը, և ըստ էության միաստվածությունն է դարձել այս երկու հոսանքներն իրար կապող կարևոր տեսական ու գաղափարական գործոնը:

<u>Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը</u>:Հետազոտության մեջ կատարված ընդհանրացումներն ու եզրակացություններն ունեն տեսական և գործնական նշանակություն: Տեսական նշանակությունն այն է, որ ատենախոսության արդյունքները կարող են նպաստել արդի աշխարհում տեղի ունեցող տարբեր փիլիսոփայական և կրոնափիլիսոփայական հոսանքների երկխոսության իմաստավորմանը` հուդայահելլենիստական և վաղքրիստոնեական փի-

լիսոփայական համակարգերի համեմատության օրինակով, իսկ գործնականը՝ միջմշակութային և միջկրոնական երկխոսության, տարբեր կրոնափիլիսոփայական համակարգերի հարաբերության ընթացքում հաշվի առնել կրոնականի ու փիլիսոփայականի համադրման և փոխառնչակցության դերակատարությունը:

Հետազոտության փորձաքննությունն ու հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության ամբիոնում:

Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ԲՈՀ-ի կողմից ընդունելի ամսագրերում և պարբերականներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատության ծավալն է 128 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ տրվում է սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, հիմնավորվում են թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի գիտական նորույթը, նպատակն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը և ժամանակագրական սահմանները, ինչպես նաև հիմնական դրույթները:

Առաջին գլուխը՝ **«Ա-Բ դարերի հուդայահելլենիստական և քրիստոնեական մեկնարվեստի համատեքստը»**, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Ուրվագիծ հունահռոմեական ճարտասանական մեկնարվեստի»**, ընդհանուր գծերով ներկայացվում է հունահռոմեական ճարտասանական արվեստը, առանց որի անհնար է պատկերացնել հուդահայահելլենիստական մեկնարվեստի և վաղ քրիստոնեական փիլիսոփայության զարգացման պատմական ընթացքը: Սկիզբ առնելով արդեն Ք. ա. Ը-Է դարերում, իբրև Հոմերոսի պոեմներում առանձին անունների ու բառերի ստուգաբանություն՝ այն իր վերջնական տեսքն ստացավ Ք. ա. Ե դարում: Պլատոնի ու Արիստոտելի կողմից արդեն տրվեցին նաև ճարտասանության փիլիսոփայական սահմանումները, ինչպես նաև որոշարկվեցին ճարտասանական խոսքի կառուցվածքն ու դրա փիլիսոփայական կիրառության սահմանները: Արիստոտելն ստեղծեց անտիկ աշխարհի ճարտասանական ամենակարևոր գործերից մեկը՝ «Յաղագս մեկնութեան (Peri\ e9rmhnei/aj)» և սահմանեց ճարտասանությունը՝ իբրև «...ամենահամո-

գիչը բացահայտելու մի կարողություն»[1]: Հռոմեական իրականության մեջ ճարտասանական մեկնարվեստը բուռն ծաղկում է ապրում Ցիցերոնի և նրա մեծագույն երկրպագու Քվինտիլիանոսի երկերով: Ցիցերոնը տալիս է ճարտասանության նոր, հռոմեական իրականությանը պատշաճող սահմանումը. «Բոլոր ճառերի նպատակն է *ուսուցանել, խնամել ու առաջնորդել* (*docere, delectare, movere*)»[2]: Հունահռոմեական ավանդույթից եկող այս տեսական հիմնավորումներն առաջ են բերում ճարտասանական երկերից գիտական մեկնությունների անցման անհրաժեշտություն, իսկ ավելի ուշ արդեն ճարտասանությունն է սկսում ազդվել փիլիսոփայական երկերից՝ ձեռք բերելով փիլիսոփայական նրբերանգներ ու առանձնահատկություններ: Հին Ստոյայի և նորպլատոնական փիլիսոփաների երկերով (Ք. ա. Գ.-Ք. հ. Ե. դդ.) նոր գիտական աստիճանի է բարձրացվում պլատոնյան փիլիսոփայությունը և դրա երկերի մեկնաբանությունը[3]: Երկրորդ ենթագլխում՝ **«Հունահռոմեական դասական ճարտասանությունն ու փիլիսոփայությունը և վաղ քրիստոնեական մեկնարվեստը»**, ցույց է տրվում քրիստոնյա առաջին հեղինակների ուղղակի և անուղղակի ազդվածությունը հունահռոմեական ճարտասանության և փիլիսոփայության մեթոդներից ու ավանդույթից: Այնուամենայնիվ, առանձին քրիստոնյա հեղինակներ փորձում են նաև քրիստոնեությունը ներկայացնել առանձին, բոլորովին տարբեր համատեքստի մեջ՝ դրանով իսկ հակասության մեջ մտնելով հունահռոմեական ճարտասանական ավանդույթի հետ և որոշ դեպքերում նույնիսկ հակադրվելով դրան: Վերջին տարիների ուսումնասիրությունների համաձայն՝ Պողոս առաքյալի նամակներում նկատելի են հունահռոմեական ճարտասանական ավանդույթի հետքեր[4]: Ավելին դրանցում հայտնաբերվել են նույնիսկ անտիկ և հելլենիստական դարաշրջանի հեղինակների երկերից արված մեջբերումներ: Հետագա դարերի քրիստոնյա մտածողների ու փիլիսոփաների երկերում հունահռոմեական փիլիսոփայական ավանդույթից կրած ազդեցության հետքերն առավել նկատելի են: Նրանց տեսության համաձայն՝ անտիկ ու հելլենիստական հեղինակների մտքերն ու երկերից արված մեջբերումները նույնիսկ հիմնավորվում են՝ իբրև Աստծո կողմից

---

[1] *Aristotelis Categoriae et Liber de Interpretatione*, recognovit brevique anotatione critica instruxit L. Minio-Paluello, e typographeo Clarendoniano, London, 1974, էջ 50:

[2] *M. Tulli Ciceronis libellus De optimo genere oratorum*, I, 3, Edmundus Hedicke recensuit, Soraviae Lusatorum, 1889:

[3] Տե՛ս **George Kennedy**, *The Art of Persuasion in Greece,* , New Jersey, 1963, էջ 52-321:

[4] Տե՛ս **Carl Joachim Classen**, *Rhetorical Criticism of the New Testament*, coll. *Wisseschaftliche Untersuchungen aum Neuen Testament* 128, Mohr Siebecek: Tübingen, 2000, էջ 30:

տրված իմաստության սերմերի դրսևորումներ: Քրիստոնյա մտածողներից ոմանց համոզմամբ՝ որոշ հարցերում քրիստոնյաներն ու անտիկ-հելլենիստական շրջանի փիլիսոփաները նույն բանն են քարոզում[5]: Այսպիսով, քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման ու զարգացման ընթացքի լուսաբանման համար հուդայահելլենիստականից ոչ պակաս կարևոր է նաև հունահռոմեական համատեքստի վերհանումը, քանզի այն որոշ դեպքերում թե՛ հուդայահելլենիզմի և թե՛ քրիստոնեության համար ունեցել է վճռորոշ դերակատարություն:

Երկրորդ գլխում՝ **«Հուդայահելլենիզմն ու նրա նշանակությունը Ա-Բ. դարերի քրիստոնեական մեկնարվեստի ծագման համար»**, նախ փիլիսոփայության պատմության տեսանկյունից սահմանվում է հուդայահելլենիզմն իբրև կրոնափիլիսոփայական համակարգ, այնուհետև համառոտակի ներկայացվում են հուդայահելլենիստական փիլիսոփայության սկզբնաղբյուրներն ու աղերսները նորկտակարանյան գրականության հետ:

Առաջին ենթագլխում՝ **«Հուդայահելլենիզմն իբրև կրոնափիլիսոփայական համակարգ»**, սահմանելով «հուդայահելլենիզմ» եզրն իր կրոնական, փիլիսոփայական ու մշակութային առանձնահատկություններով, ատենախոսը եզրակացնում է, որ հուդայահելլենիզմն իբրև կրոնափիլիսոփայական համակարգ իր առանձին տեղն ու դերն է ունեցել հելլենիստական փիլիսոփայական մտքի պատմության մեջ՝ իբրև գերազանցապես միաստվածյան կրոնական ավանդույթի կրող: Ընդ որում, *հուդայահելլենիզմ* ասելով հասկացվում է ոչ թե միայն հուդայական և հելլենիստական փիլիսոփայական աշխարհայացքների խաչաձևումից առաջացած առանձին կրոնափիլիսոփայական համակարգ, այլ այն ներառում է նաև մշակութային, լեզվական և բազմաթիվ այլ ոլորտներ: Հունարեն լեզվի, լեզվամտածողության, կրթական համակարգի ու մշակույթի լայն տարածումը հուդայականության մեջ առաջ է բերում նաև զգալի փոփոխություններ կրոնական ու փիլիսոփայական ընկալումների մեջ: Մյուս կողմից, սակայն, ի հայտ է գալիս որոշակի զգուշավորություն հելլենիզմի այս հաղթարշավի դեմ, որն ի վերջո վերաճում է բացահայտ հակադրության: Հուդայահելլենիզմի առաջացման հիմքում ընկած են հենց այս երկու հակադիր մոտեցումները: Հուդայականության առավել պահպանողական, միաստվածական կրոնի առավել ջերմ ջատագովները, ավելի կարևորելով հելլենիզմի փիլիսո-

[5] Տե՛ս “1 Apology 20:3; 4-5”, *Patrologia Graeca* VI col. 337:

փայական աշխարհընկալման ու ճանաչողության մեթոդները, թույլ չտվեցին, որպեսզի հուդայահելլենիզմը դառնա բազմաստվածության հետ ձուլված, սինկրետիկ կրոն: Իսկ առավել ազատամիտները, ազդվելով, անշուշտ, այս զորավոր հակադարձումից, հելլենիզմը երբեք չդարձրին կրոնական երևույթ` ավելի շատ զարգացնելով այն հուդայահելլենիզմի ծիրից ներս` իբրև զուտ կրոնափիլիսոփայական համակարգ: Երկրորդ ենթագլխում` **«Հուդայահելլենիստական փիլիսոփայության հիմնական սկզբնաղբյուրները»**, երկու հիմնական խմբերով ներկայացվում են հուդայահելլենիստական փիլիսոփայության կարևորագույն սկզբնաղբյուրները: Հուդայահելլենիզմի առաջին, շոշափելի վկայությունը եբրայեցերեն Սուրբ Գրքի թարգմանությունն էր հունարենի, որին տրվեց «Յոթանասնից թարգմանություն» անվանումը: Կրոնական ու փիլիսոփայական բազմաթիվ եզրեր թարգմանվեցին եբրայեցերենից ու իրենց մնայուն տեղն զբաղեցրին Սփյուռքում ապրող հունախոս հրեաների լեզվամտածողության ու աշխարհայացքի մեջ: Վերոնշվածը հատկապես զգալի էր եբրայական Սուրբ Գրքի այն երկերում, որոնց սովորաբար տալիս են «Իմաստության գրականություն» անվանումը: Վերջիններիս մեջ նույնիսկ կարելի է գտնել Պլատոնի մի քանի երկերի` «Ջատագովություն Սոկրատի», «Հանրապետություն» ևն ազդեցության հետքեր: Սակայն ամենից ավելի այս երկերն ազդվել են ստոյիկյան փիլիսոփայությունից` հաճախ ուղղակիորեն մեջբերելով կամ կիրառելով ստոյիկյան փիլիսոփայության եզրեր ու արտահայտություններ: Հուդայահելլենիստական փիլիսոփայության հիմնական սկզբնաղբյուրներն են` Կեղծ Արիստեասի Թուղթը Յոթանասնից թարգմանության վերաբերյալ, Արիստոբուլոս Ալեքսանդրացու երկերը և Փիլոն Ալեքսանդրացու մեկնողական-փիլիսոփայական ժառանգությունը: Երրորդ ենթագլխում` **«Հուդայահելլենիզմն ու Ա դարի քրիստոնեական մեկնողական գրականությունը. Փիլոն Ալեքսանդրացի և Նորկտակարանյան գրականություն»**, վերհանվում են հիմնականում հուդայահելլենիստական փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչ Փիլոն Ալեքսանդրացու գրական ժառանգության ազդեցության ոլորտները նորկտակարանյան գրականության վրա, որն ըստ էության արդեն կազմում էր Հին Կտակարանի` հուդայական Օրենքի մեկնարվեստի մի նոր մեթոդ: Այս երկու համատեքստերն աշխատության մեջ վերլուծվում են ըստ հետևյալ առնչակցությունների` գրական-սկզբնաղբյուրային, գաղափարական-բովանդակային և մեկնողական-մեթոդական: Եվ այս իմաստով, իհարկե, կենտրոնական ու առանցքային դերակատարություն է ունեցել Փիլոն Ալեքսանդրացին: Փիլոն Ալեքսանդրացու և

Նորկտակարանյան գրականության միջև առնչակցության հետքերը վերհանելիս առանձնապես կարևոր անդրադարձ է կատարվում նրա երկերի ու Պողոս առաքյալի որոշ թղթերի գաղափարական-բովանդակային ու մեկնողական-մեթոդական ընդհանրություններին: Նորկտակարանյան երկերից Փիլոնի կրոնափիլիսոփայական համակարգի հետ ունեցած իր գաղափարական-բովանդակային ընդհանրությամբ հատկապես առանձնացվում է Հովհաննեսի Ավետարանը, որտեղ կիրառված Լոգոսի վարդապետությունը լայնորեն առկա է նաև Փիլոն Ալեքսանդրացու մեկնողական ու փիլիսոփայական երկերում: Այստեղ հատուկ ուշադրություն է դարձվում նաև հուդայահելլենիստական և վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայական համակարգերում տարածված «անձնավորված Իմաստություն/Լոգոս» հասկացությանը, որն իր ամենաիղկված ու մշակված դրսևորումներն է գտել Փիլոնի երկում:

Երրորդ գլխում՝ **«Հուդայահելլենիստական փիլիսոփաներն ու անտիկ մեկնարվեստի հիմնահարցերը»**, վերլուծված են հուդայահելլենիստական փիլիսոփաների առաջադրած տեսություններն ու մեկնարվեստի մեթոդները՝ անտիկ մեկնարվեստի հիմնահարցերի հետ ունեցած հարաբերության լույսի ներքո: Առաջին ենթագլխում՝ **«Հրեական կրոնական գրականության թարգմանության առանձնահատկությունները և դրանց առնչությունները հելլենիստական փիլիսոփայության հետ»**, ընդհանուր գծերով ներկայացվում է հրեական կրոնական գրականության հունարեն թարգմանությունը՝ վերլուծելով և օրինակներով ցուցադրելով փիլիսոփայական ներմշակության նացման այդ առանձնահատուկ գործընթացը: Իբրև քննարկման առանցքային խնդիր՝ ուշադրություն է դարձվում «անձնավորված Իմաստություն» հասկացությանը, որի առավել ցայտուն ու բնորոշ դրսևորումները քննվել են ըստ աստվածաշնչյան երկու դրվագների՝ Առակաց գիրք, գլ. Ը 1-36 և Սողոմոնի Իմաստության գիրք, գլ. Զ-Թ: Առակաց Ը գլուխը հատկապես նմանություններ ունի ստոյիկյան փիլիսոփայության հետ՝ հունարեն թարգմանական իր ոճով ու կիրառված մեթոդով սերտ ընդհանրություններ դրսևորելով նաև Արիստոբուլոսի փիլիսոփայական հայացքների հետ: Հատկապես ակնհայտ է այս տեքստում a@rmo/zousa (հուն. a0rmo/zw բայից)՝ «պատշաճ, համապատասխան լինել» բառը, որը տվյալ համատեքստում ներգործական իմաստով ակնարկում է ստոյիկյան Լոգոսի՝ աշխարհը ներդաշնակողի գաղափարը: Իմաստության՝ Sophia/Logos-ի անձնավորման ու վերացարկման առումով կարևորվում է Սողոմոնի Իմաստության գրքի Զ-Թ գլուխները, որտեղ նկարագրվում են պնևման

ու ներշնչման վարդապետությունը՝ որդեգրելով ստոյիկյան մտավոր-բանական հոգու (հուն. pneu=ma noero/n) բնորոշ գծեր:

Երկրորդ ենթագլխում՝ **«Անձնավորված Իմաստությունը հուդայահելլենիստական մեկնարվեստի և փիլիսոփայության խաչուղիներում»**, ներկայացվում է հուդայահելլենիստական մեկնարվեստի ու փիլիսոփայության կարևորագույն հասկացություններից մեկի՝ «անձնավորված Իմաստության» զարգացումն ու մեկնաբանությունը հուդայահելլենիստական փիլիսոփաների երկերում: Հուդայահելլենիստական փիլիսոփաների անդրադարձներից կարևորվում են աստվածաշնչյան երկու դրվագ՝ Յոբ ԻԸ 20-28 և Սիրաքի Իմաստություն ԽԲ 15-ԽԳ, որոնք հունարեն թարգմանության ժամանակ, ի տարբերություն եբրայեցերեն բնագրի, ստացել են ավելի փիլիսոփայական-տեսական երանգ: Հուդայահելլենիստական մյուս կարևոր հեղինակն այս իմաստով Արիստոբուլոսն է, որի երկերում ըստ էության առաջին անգամ բացահայտորեն սահմանվում է անձնավորված Իմաստությունը: Արիստոբուլոսի՝ Առակաց Ը գլխին նվիրված մեկնության համաձայն՝ անձնավորված Իմաստությունն արարչության ստեղծողն է, առաջին լույսը, որն այնուհետև իբրև նախագո լույս, լուսավորում է կանթեղի նման՝ առանց սպառվելու: Փիլոն Ալեքսանդրացին ավելի է հստակեցնում Իմաստության վերաբերյալ Արիստոբուլոսի մոտեցումը: Ըստ այսմ, անձնավորված Իմաստությունը նախևառաջ հայտնվում է իբրև արարչության կամ աշխարհի հետ ունեցած ծնողական հարաբերության մարմնացում, այսինքն՝ Իմաստությունն, իբրև արարածների մայր, Աստծուց առնում է սերմն ու ծնունդ տալիս իր զավակին՝ տիեզերքը: Իմաստության հաջորդ անձնավորումը Փիլոնի երկում դրսևորվում է իմաստուն իշխանի կերպարով, իսկ երրորդ դեպքում՝ իբրև իմացության լույս ու ճանապարհ:

Ատենախոսության վերջին, չորրորդ գլխում՝ **«Հուդայահելլենիստական մեկնարվեստի վերջնական թափանցումը վաղ քրիստոնեական փիլիսոփայության մեջ»**, ամփոփ ձևով ներկայացվում են հուդայահելլենիստական մեկնարվեստի՝ քրիստոնեական փիլիսոփայության վրա ունեցած ազդեցության արդյունքները, և սահմանվում քրիստոնեական փիլիսոփայական հոսանքների կողմից հուդայահելլենիստական մեկնարվեստի որդեգրման հիմնական ճանապարհների նկարագրությունն ու նշանակությունը: Առաջին ենթագլխում՝ **«Հուդայահելլենիստական մեկնարվեստի սկզբունքների ու մոտեցումների վերջնական որդեգրումը վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայության շրջագծում (Բ-Գ դդ.)»**, ատենախոսը ներկայացնում է վաղ քրիստոնեական փիլիսոփայության կողմից հուդա-

յահելլենիստական տեսական-մեթոդական հիմքերի ու մոտեցումների որդեգրման զարգացման ընթացքը: Բ.-Գ. դարերի քրիստոնյա հեղինակներն արդեն ծավալուն մեջբերումներ էին արել հուդայահելլենիստական երկերից՝ դրանով կամենալով ցույց տալ Աստծո Խոսքի և Իմաստության հայտնության նոր, իմաստասիրական եզրերով ճոխացած համատեքստի առկայությունը քրիստոնեության ծագումից առաջ: Բ.-Գ. դարերի քրիստոնյա փիլիսոփաների երկերում առկա հուդայահելլենիստական փիլիսոփաների մտքերի ու մեթոդների, նրանց աշխատանքներից արված մեջբերումների առումով գլխավոր ու առանցքային տեղ են զբաղեցնում Փիլոն Ալեքսանդրացու երկերը: Փիլոնի փիլիսոփայական հայացքների ու սկզբունքների, մեկնարվեստի մեթոդների ու մոտեցումների հետքեր են նշմարվում վաղ քրիստոնեական ջատագով-փիլիսոփաների, բայց հատկապես Ալեքսանդրիայի դպրոցի երկու ամենանշանավոր հեղինակների՝ Կղեմես Ալեքսանդրացու (150-215 թթ.) և Որոգինեսի (185-253 թթ.) աշխատություններում: Կղեմեսը վաղ քրիստոնեական շրջանի առաջին մտածողն է, որ խոսում է Փիլոնի մասին՝ նրան անվանելով պյութագորյան փիլիսոփա և նույնիսկ ուղղակի մեջբերում կատարում նրա երկերից[6]: Ընդհանուր առմամբ, ձեռքի տակ ունեցած սկզբնաղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ Կղեմեսն իր փիլիսոփայական համակարգի ձևավորման ճանապարհին մեծապես (մոտ 75%) ազդվել է Փիլոնի մեկնարվեստից: Որոգինեսը, նույնպես քաջածանոթ լինելով փիլոնյան մեկնարվեստին ու փիլիսոփայությանը, երկիցս ուղղակիորեն տալիս է Փիլոն Ալեքսանդրացու անունը՝ հղելով նաև երկի վերնագիրն ու բովանդակությունը[7]: Այս երկու անուղղակի մեջբերումներից բացի մեկ տասնյակից ավելի դեպքերում Որոգինեսն անուղղակիորեն է տալիս Փիլոնի անունը՝ նրան անվանելով «մեր նախորդներից մեկը», «մեկնիչներից ոմանք», «այս հատվածը մեկնող մեկը» և այլն: Երկրորդ ենթագլխում՝ **«Անձնավորված Իմաստությունը վաղ քրիստոնեական փիլիսոփայության համակարգում (Բ-Գ դդ.)»** հեղինակը կրկին անդրադառնում է անձնավորված Իմաստության թեմային, սակայն այս անգամ արդեն՝ վաղ քրիստոնեական փիլիսոփայության ծիրից ներս: Անձնավորված Ի-

---

[6] Տե՛ս **David T. Runia**, *Philo in early Christian literature: a survey*, Van Gorcum: Minneapolis: Fortress Press (Compendia Rerum Iudaicarum ad Novum Testamentum. Section 3, Jewish traditions in early Christian Literature: vol. 3), էջ 132:

[7] Տե՛ս *Origenes Werke, zweiter Band, Buch V-VIII gegen Celsus*, VI. 21.27, Hg. von Paul Koetschau, coll. *Die griechischen christlichen Schriftsteller der ersten Jahrhunderte*, Leipzig 1899; *Origenes in Evangelium Matthaei Commentarium*, pars I, XV.3, ed. C.H.E. Lommatzsch, Berolini 1834:

մաստության գաղափարը վաղ քրիստոնեական փիլիսոփայության մեջ ընկալվում և զարգանում է իբրև քրիստոնեական իմացաբանության՝ գնոսիսի հիմք՝ Յիսուս Քրիստոսի հետ նույնացման տեսանկյունից: Լոգոսի կամ անձնավորված Իմաստության վարդապետությունը վաղ քրիստոնեական մտածողների երկերում դրսևորվում էր իբրև՝ **ա** արարչագործության մեջ կարգ ու կանոնի երաշխավոր Աստծո Խոսք, **բ.** մտահայեցական մակարդակի վրա՝ իբրև քրիստոնեական մտածողության և գիտության գերագույն աղբյուր, **գ.** իբրև քրիստոնեական բարոյականության և բարոյագիտության միակ սկզբնաղբյուր, **դ.** հոգեբանական իմաստով՝ իբրև մտածողության նախատիպ (verbum mentis), ե. իբրև Յայտնության Խոսք և երկնային մեկնիչ[8]:

Երրորդ, վերջին ենթագլխում՝ **«Կղեմես և Որոգինես. հուդայահելլենիստական մեկնարվեստի վերջնական որդեգրումն Ալեքսանդրիայի քրիստոնեական կրոնափիլիսոփայական դպրոցի կողմից»**, ամբողջացվում է հուդայահելլենիստական մեկնարվեստի՝ վաղ քրիստոնեական փիլիսոփայության մեջ թափանցման գործընթացի պատմական ու փիլիսոփայական առանձնահատկությունների նկարագրությունը: Փիլիսոփայության ու մեկնարվեստի հարցերում Ալեքսանդրիայի դպրոցի սկզբունքներն ու մոտեցումները գրեթե ամբողջությամբ հենվում էին փիլոնյան փիլիսոփայական մեկնարվեստի վրա: Մեթոդաբանական տեսանկյունից Կղեմեսը կատարելապես հետևում է Փիլոնին, այսինքն՝ ստեղծել նոր, անտիկ դասական մշակույթի պահանջներին համապատասխան փիլիսոփայություն, որը, սակայն, պետք է ունենա ոչ թե հերթական փիլիսոփայական համակարգի սկզբունքներ, այլ դառնա «ճշմարիտ փիլիսոփայություն», որի միջոցով հնարավոր կլինի համապատասխան ձևով մեկնել, փիլիսոփայական բացատրություն տալ քրիստոնյաների Սրբազան Գրքին՝ Նոր Կտակարանին, ինչպես դա արել էր իր ժամանակ Փիլոնը՝ հրեաների Սուրբ Գրքի՝ Յին Կտակարանի պարագային[9]: Կղեմեսը Փիլոնի փիլիսոփայական համակարգից փոխառում է նաև մի շատ կարևոր հասկացություն՝ *Լոգոս-գնոսիս,* որը հետագայում դառնալու էր վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայության կարևորագույն հիմքերից մեկը: Լոգոսն իբրև *Պատկերների պատկեր կամ Գաղափարների գաղափար,* Կղեմեսի երկում ձեռք է բերում երեք հիմնական հատ-

[8] Տե՛ս **A. Grillmeier**, *Jesus der Christus im Glauben der Kirche*, vol. 1, Herder, 1979, էջ 106-148:

[9] Տե՛ս **A. di Berardino & B. Studer**, *Storia della Teologia. I. Epoca patristica*, Edizioni Piemme: Spa, 1993, էջ 184:

կություն՝ **ա** բնազանցական իմաստով արարչության մեջ բոլոր իրերի հիմք և կյանք Աստվածային զորությունը կամ ուժը նույնացվում է Աստծո Որդու կամ Լոգոսի հետ, **բ.** բարոյաբանական կամ էթիկական առումով, իբրև այդ բոլոր իրերի կամ էակների կենսական հիմք, Լոգոսը նրանց ուղղորդում է դեպի աստվածային երանության գործառնություն (beneficient activity) և **գ.** իմացաբանական գետնի վրա Լոգոսն էակներին տրվող աստվածային զորությամբ նրանց տալիս է նաև ճանաչելիության և ճանաչողության ձևերը՝ սահմանելով իրերի ու առարկաների ռացիոնալ, բանական բացատրության ճանապարհը: Ի տարբերություն Կղեմեսի, որի երկում հուդայահելլենիստական, մասնավորապես փիլոնյան ազդեցությունը դրսևորվում էր ընդգծված փիլիսոփայական ոգով, Որոգինեսի աշխատություններում կարևորվում է հենց հուդայահելլենիստական մեկնարվեստը: Մասնագիտական գրականության մեջ հիմնականում ընդունված է այն տեսակետը, որ Որոգինեսն իր մեկնարվեստի երկու հիմնական սկզբունքները՝ այլեգորիա/տիպոլոգիա և Աստվածաշնչի մեկնության եռամասնյա մեթոդ, փոխառել է հուդայահելլենիստական փիլիսոփայական ավանդույթից[10]: Կրոնափիլիսոփայական այն կարևորագույն դրույթը, որ մարդն Աստծո պատկերն է՝ eikon-ը, նույնպես Որոգինեսի կողմից փոխառվել է հուդայահելլենիստական մեկնարվեստից: Ընդհանրապես, հետազոտողների կարծիքներն այս առումով ընդհանրացվում են հետևյալ երեք կետերի շուրջ, որոնք էլ բնորոշում են փիլոնյան մեկնարվեստից Որոգինեսի ազդված լինելու հիմնական ոլորտները.

**ա** առաքինությունները, իբրև մեկ ամբողջություն, մշտական հարաբերության հետեն նրանց հիմքը կազմող Բարու հետ.

**բ.** պլատոնյան genus generalissimum (Ընդհանրական Բարի) հասկացությունը կիրառվում է Աստծո նկատմամբ.

**գ.** մարդն արարվում է ըստ Աստծո՝ Լոգոսի ու Ընդհանրական Բարու պատկերի և նմանության[11]:

Այնուամենայնիվ, մինչև այսօր էլ անտիկ հունական և փիլոնյան, ինչպես նաև նորկտակարանյան մեկնարվեստի հետքերի ամբողջական ուսումնասիրությունը Որոգինեսի ստվարածավալ ժառանգության մեջ դեռևս մնում է քննարկման և հատուկենտ առթական հետազոտությունների մակարդակի վրա: Գիտնականները մինչև օրս

[10] Տե՛ս **Hanson R. P. C.**, *Allegory and Event: a Study of the Sources and Significance of Origen's Interpretation of Scripture*, London, 1959, էջ 361, 368:

[11] Տե՛ս **Horn H.-J.**, "Antakoluthie der Tugenden und Einheit Gottes", *Jahrbuch für Antike und Christentum* 13 (1970), էջ 22-24:

էլ տատանվում են մի շատ կարևոր հարցում՝ արդյոք Որոգինեսը յուրացրել է իր ժամանակի հուդայահելլենիստական և հելլենիստական մեկնարվեստը Փիլոնի և մյուս հուդայահելլենիստ փիլիսոփաների միջոցո՞վ, թե՞ պարզապես շարունակել է նորկտակարանյան, մասնավորապես Պողոս առաքյալի մշակած մեկնարվեստի ավանդույթը: Ըստ էության, երկու մոտեցումներն էլ կարող են համարժեք նշանակություն ունենալ: Սխալ կլինի կարծել, որ Որոգինեսը միայն փիլոնյան մեկնարվեստով էր առաջնորդվում: Սխալ է նաև պնդել, որ նա ընդհանրապես չի ազդվել Փիլոնի թողած ժառանգությունից՝ առաջնորդվելով բացառապես նորկտակարանյան արդեն ավանդական դարձած մեկնարվեստով:

«Եզրակացություն»-ում ամփոփվում են հետազոտության արդյունքները, ներկայացվում հիմնական դրույթները.

1. Հուդայահելլենիստական և վաղ քրիստոնեական մեկնարվեստի համար կարևոր պատմամշակութային համատեքստ է ծառայել հունահռոմեական ճարտասանությունը, որի տրամադրած մեթոդներն ու սկզբունքները լայնորեն կիրառվել են հուդայահելլենիզմում և վաղ քրիստոնեական փիլիսոփայության մեջ: Հունահռոմեական ճարտասանությունը, սկզբում ձևավորվելով իբրև զուտ հռետորական երևույթ, Արիստոտելի ու Պլատոնի, իսկ հետագայում հռոմեական փիլիսոփաների և ստոյիկների կողմից սահմանվեց փիլիսոփայորեն: Հուդայահելլենիստական ու վաղ քրիստոնեական հեղինակներին ժամանակակից հունահռոմեական մշակույթի կրող փիլիսոփաներն ու ճարտասաններն իրենց մեկնություններով մեծապես նպաստեցին պատմական այս երկու իրողությունների համար բարեբեր համատեքստի ստեղծմանը: Հենց հունահռոմեական փիլիսոփայության ու ճարտասանության համատեքստում են զարգացել թե՛ հուդայահելլենիստական մեկնարվեստը և թե՛ վաղ քրիստոնեական փիլիսոփայությունը: Ուղղակիորեն ազդված լինելով հուդայահելլենիստական մեկնարվեստից՝ վաղ քրիստոնեական փիլիսոփայությունը, սակայն, առանց հուդայահելլնիստական մեկնարվեստի միջնորդության, հաճախ կրել է նաև հունահռոմեական փիլիսոփայական ու ճարտասանական համատեքստի պատմական, մշակութային, լեզվական, կրոնափիլիսոփայական ազդեցությունները: Առկա սկզբնաղբյուրային վկայություններն այսօր թույլ են տալիս հաստատել, որ հուդայահելլենիստական մեկնարվեստի կողքին, իհարկե, թեև համեմատաբար նվազ չափով, այնուամենայնիվ առկա են նաև հունահռոմեական մեկնարվեստն ու փիլիսոփայությունը՝ իբրև վաղ քրիստոնեական փիլիսոփայության ծագմանն ու ձևավորմանը նպաստած գործոններ:

2. Հելլենիզմի տարածման ժամանակաշրջանում նրա վերափոխիչ ազդեցության տակ հայտնվեց նաև հուդայականությունը: Պաղեստինում և հրեական Սփյուռքում բնակվող հրեաներն աստիճանաբար յուրացրեցին հելլենիստական լեզվամտածողությունը, փիլի-

սոփայական աշխարհայացքը՝ դրանով իսկ ստեղծելով նոր ու առանձին մի կրոնափիլիսոփայական համակարգ։ Մասնագետներն այսօր այն անվանում են հուդայահելլենիզմ՝ նրա զարգացման հիմնական աշխարհագրական-մշակութային վայր մատնանշելով Եգիպտոսի հրեական սփյուռքը։ Իբրև հիմք ունենալով միաստվածության հավատքը՝ հուդայահելլենիստական փիլիսոփայությունը լավագույնս պատշաճում էր նույնպես միաստվածյան կրոն քրիստոնեությանը։ Հուդայահելլենիստական մեկնարվեստի յուրացումը վաղ քրիստոնեական փիլիսոփայության կողմից առանձնապես գործուն է եղել Ալեքսանդրիայում, որտեղ արդեն գոյություն ունեին ներմշակութային նացման նախադեպեր։ Այս ամենին նպաստում էր նաև անտիկ և վաղ հելլենիստական փիլիսոփայության մեջ հրեական կրոնափիլիսոփայության նկատմամբ ստեղծված նոր հետաքրքրությունը։ Հուդայահելլենիստական մեկնարվեստի ու փիլիսոփայության սկզբնաղբյուրները հիմնականում ունեին շեշտված կրոնափիլիսոփայական բնույթ։ Դրանցից ամենահինն ու առանցքայինը, թերևս, եբրայական Սուրբ Գրքի՝ Օրենքի հունարեն թարգմանությունն էր՝ Յոթանասնիցը, որը կատարվել էր ժամանակի հելլենիստական փիլիսոփայության լեզվամտածողությանն ու փիլիսոփայական աշխարհայացքին համապատասխան։ Այս թարգմանության տարբեր մասերում առկա են ինչպես անտիկ դասական, այնպես էլ ստոյիկյան փիլիսոփայության ազդեցության հետքեր։ Հետագայում հուդայահելլենիստական մեկնարվեստի ու փիլիսոփայության սկզբնաղբյուրները հիմնականում զարգացան՝ համադրելով եբրայական միաստվածության և հելլենիստական սինկրետիկ կրոնափիլիսոփայական մտքի սկզբունքները։ Ա-Բ դարերում հուդայահելլենիստական մեկնարվեստն ու վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայությունն առնչակցվում են նորկտակարանյան գրականության մեջ։ Վերջինիս հեղինակների վրա հատկապես մեծ ազդեցություն էր թողել հուդայահելլենիստական մեկնարվեստի ամենանշանավոր ներկայացուցիչ Փիլոն Ալեքսանդրացին։ Վաղ քրիստոնեական փիլիսոփայության վրա հուդայահելլենիստական մեկնարվեստի ունեցած ազդեցությունը ի հայտ է բերվում ոչ միայն սկզբնաղբյուրներում առկա տվյալների, այլև մեթոդական ու գաղափարական նմանությունների քննության և վերլուծության ճանապարհով։ Նոր Կտակարանի և ընդհանրապես Ա-Բ դարերի քրիստոնեական կրոնափիլիսոփայության մեջ հուդայահելլենիստական մեկնարվեստի ամենամեծ ներդրումը թերևս Լոգոսի և անձնավորված Իմաստության հասկացությունների ներմուծումն էր։

3. Հրեական կրոնական գրականության թարգմանությունն այն հիմնական տեսական հենքն է դառնում, որի հիման վրա զարգանում է հելլենիստական շրջանի փիլիսոփայական բառագանձի յուրացումը հուդայահելլենիստական փիլիսոփաների կողմից։ Առանցքային գաղափարներից մեկն է անձնավորված Իմաստության կամ Լոգոսի մասին տեսությունը, որի լույսի ներքո հուդայահելլենիստական ավանդույթի կրողները կարողանում են հիմնավորել միաստ-

վածյան կրոնին բնորոշ փիլիսոփայական աշխարհայացքի ձևավոր-
ման հիմքերը: Այս առումով հատկապես սերտ աղերսներ են ներկա-
յացվում մասնավորապես իրեական կրոնական գրականության թարգ-
մանական հուշարձանների և ստոյիկյան փիլիսոփայական ավան-
դույթների միջև: Ըստ այսմ, հուդայահելլենիստական գրեթե բո-
լոր հեղինակներն անդրադառնում են անձնավորված Իմաստության
գաղափարին, որի մասին արտահայտված տեսակետներն արդի մասնա-
գետները բաժանում են երկու խմբի՝ նախափիլոնյան (Փիլոն Ալեք-
սանդրացուց առաջ) և փիլոնյան (Փիլոն Ալեքսանդրացու վարդապե-
տությունն անձնավորված Իմաստության և Լոգոսի մասին): Անձնա-
վորված Իմաստության գաղափարի կիրառմամբ, ի դեմս Փիլոն Ալեք-
սանդրացու արդեն Ք. ա. Ա դարում հուդայահելլենիստական փիլի-
սոփայությունն ու մեկնարվեստը վերջնականապես ներմշակու-
թայնացրել էին հելլենիստական փիլիսոփայական եզրերն ու գաղա-
փարները՝ ստեղծելով փիլիսոփայական առանձնահատուկ համակարգ:

4. Յուդայահելլենիստական մեկնարվեստը վաղ քրիստոնեա-
կան փիլիսոփայության ձևավորման շրջանին արդեն ավանդույթ-
ներ ունեցող փիլիսոփայական համակարգ էր, որը հաջողությամբ ի-
րականացրել էր միաստվածյան կրոնի սկզբունքների համադրումը
հելլենիստական փիլիսոփայական աշխարհայացքի հետ: Վաղ քրիստո-
նեական փիլիսոփայությունը հատկապես կարևորում է հուդայա-
հելլենիստական մեկնարվեստի եզրերով սահմանված անձնավորված
Իմաստության գաղափարը՝ դրան տալով զուտ քրիստոնեական՝ իմացա-
բանական ու բարոյական երանգներ: Իմացաբանական իմաստով Իմաս-
տությունը կամ Լոգոսը, նույնացվելով Յիսուս Քրիստոսի հետ,
դառնում էր քրիստոնյա անհատի համար իմացաբանական կամ ճանա-
չողական այն հիմքը՝ գնոսիսը, առանց որի նա չէր կարող հասկանալ
ու ճանաչել փիլիսոփայական աշխարհայացքը: Բարոյական ոլոր-
տում Իմաստությունը, իբրև անձնավորված հասկացություն նույ-
նանալով Քրիստոսի հետ, քրիստոնյաների համար դառնում էր պլա-
տոնյան ընդհանուր Բարիքի հոմանիշ: Այսպիսով, վաղ քրիստոնեա-
կան փիլիսոփայությունը հուդայահելլենիստական մեկնարվես-
տից լայնորեն փոխառում էր այն ամենը, ինչ կապված էր Լոգոսի
վարդապետության հետ: Այս առումով հատկապես մեծ համարում ու-
ներ Փիլոն Ալեքսանդրացու թողած ժառանգությունը, որը վիթխարի
ազդեցություն էր գործել վաղ քրիստոնեական հեղինակների մտա-
ծողության վրա:

5. Վաղ քրիստոնեական փիլիսոփայության և հուդայահելլե-
նիստական մեկնարվեստի առնչակցությունները լավագույնս
դրսևորվել են Ալեքսանդրիայի քրիստոնեական կրոնափիլիսոփա-
յական դպրոցում, որի ներկայացուցիչներն իրենց երկերում լայ-
նորեն օգտագործել են հուդայահելլենիստական փիլիսոփաների,
հատկապես Փիլոն Ալեքսանդրացու մեկնարվեստի ու փիլիսոփա-
յության սկզբունքները: Մասնավորապես Ալեքսանդրիայի դպրոցի
երկու նշանավոր ներկայացուցիչները՝ Կղեմես Ալեքսանդրացին

ու Որոգինեսը, գրեթե ամբողջությամբ յուրացնելով փիլոնյան մեկնարվեստը, կարողացան ստեղծել քրիստոնեական կրոնափիլիսոփայական նոր համակարգ: Միաստվածության հուդայահելլենիստական հիմնավորումը հնարավորություն տվեց վաղ քրիստոնեական շրջանի մտածողներին անտիկ ու հելլենիստական շրջանի որոշ փիլիսոփաների համարել ու նույնիսկ միաստվածության ու ճշմարիտ փիլիսոփայության կրողներ: Այս մոտեցումը հատկապես ակնառու է անտիկ ու հելլենիստական փիլիսոփայությանը Կղեմես Ալեքսանդրացու նվիրած վերլուծություններում: Որոգինեսի երկերում առավել չափով դրսևորվեց հուդայահելլենիստական մեկնարվեստը. մասնագետների միաձայն կարծիքով Որոգինեսն իր մեկնարվեստի փիլիսոփայական հիմքերը ճնշող մեծամասնությամբ փոխառել է Փիլոն Ալեքսանդրացու և հուդայահելլենիստական մյուս հեղինակների երկերից: Այսպիսով, Կղեմեսի ու Որոգինեսի ստեղծած վաղ քրիստոնեական կրոնափիլիսոփայական առաջին համակարգը, խարսխված լինելով հուդայահելլենիստական մեկնարվեստի վրա, նոր, քրիստոնեական լույսի ներքո շարունակեց հուդայահելլենիստական մեկնարվեստի ավանդույթները:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


**Մենագրություն.**

1. Հին Մերձավոր Արևելքից Քրիստոնյա Հայաստան. անձնավորված Իմաստության գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց Ա.-Թ.-ի, Մայր Աթոռի տպագրատուն, Ս. Էջմիածին, 2014, 191 էջ:

**Հոդվածներ.**

1. Իմաստութեան ինքնակենսագրութիւնը. Առակաց Ը.-ի աստուածաշնչային եւ հարակից աղերսները, «Էջմիածին» Է (2009), էջ 9-16, Ը, էջ 9-21:
2. Ավետարանական դրվագներ անտիկ ոսկեդարի հեղինակների երկերում, «Էջմիածին» Է (2010), էջ 5-11:
3. Առակաց Ը.-ն ըստ հայ միջնադարյան մեկնիչների, Էջմիածին Ը (2010), էջ 14-25:
4. Հույն անտիկ հեղինակները Գործք Առաքելոցում եւ Պողոս առաքյալի թղթերում, «Էջմիածին» Դ (2012), էջ 24-28:

**Artyom S. Ananyan: The Influence of Judaeo-Hellenistic Hermeneutics on the Early Christian Philosophy**
**Thesis submitted for the Ph.D. degree in philosophical sciences under the speciality 09.00.02 "History of philosophy"**

**The defense will take place on the 2nd November 2016 at 15:00, at the meeting of the Specialized Council of Philosophy and Sociology #013 of the Supreme Certifying Committee, acting at the Yerevan State University.**
**Address: Yerevan, 0025, 52a Abovyan str., YSU.**

## SUMMARY

Based on the study of Judaeo-hellenistic and early Christian sources, linguistic, philosophical and historical specifics of the I-III cc. A. D., the dissertation aims at the presentation of hermeneutical-philosophical influence of the Judaeo-hellenism on early Christian philosophy. In the Introduction, the significance, methodology, issues and purposes, as well as the review of the related literature and sources are presented. Being merely a product of the Judaic and Hellenistic religious-philosophical minds' synthesis, the Judaeo-hellenistic hermeneutics served as a theoretical-ideological bridge for early Christian philosophy to enculturate and adapt the hermeneutical and philosophical principles of antique and Hellenistic periods. However, the Judaeo-hellenistic syncretism was not the only factor; a good part of early Christian thinkers (I-III cc. A. D.) were aware of the antique and Hellenistic philosophical and rhetorical heritage, independently from its Judaeo-hellenistic adaptation.

The Judaeo-hellenism was not only formed and developed within the context of religious-philosophical trends of its time, but also posed some major problems (educational, liturgical, linguistic, and hermeneutical) to the Jewish religious tradition. Most notably, the prevalence of the Greek language in Palestine and in the Jewish Diaspora caused essential changes with regard to the traditional Jewish conception of religious-philosophical views. The most significant expression of these changes became the newly translated Greek version of the Jewish Holy Scripture, Septuaginta (LXX) where the notions and terms of stoic and peripatetic philosophies were used to transform the traditional Jewish religious language into Hellenistic vision of religious philosophy. It needs to be noted that, vis-à-vis the Hellenistic polytheism, the Judaeo-hellenistic attitude maintained continuously the Jewish traditional belief of monotheism. In this regard the notion of personified Wisdom or Sofia, or even Logos was the most important philosophical term, especially in the Jewish Diaspora of Egypt, within which the Judaeo-hellenistic thinkers conceived the new vision of religious hermeneutics. The personified Wisdom was developed in the writings of almost all the Judaeo-hellenistic philosophers, and namely in the works of Philo of Alexandria. The philonian conception of personified Wisdom and Logos influenced largely the idea of Logos in the New Testament literature, especially in the Gospel according to John and the letters of St. Paul.

The most appropriate examples for the personified Wisdom in the Septuagint are the verses from the Book of Proverbs (8:1-36) and the Book of the Wisdom of Solomon (chs. 6-8). In these two pericopes the translators (from the Judaeo-hellenistic

milieu, of course) construed their translational techniques with the stoic interpretation of Logos. The identification of the Logos with the personified Wisdom in Proverbs 8:1-36 seems to be particularly influenced from the philosophical reflections of Aristobulus, a Judaeo-hellenistic philosopher to whom the Greek translation of the Book of Proverbs was very often attributed. Another stoic reinterpretation of the Logos one could find in the Book of the Wisdom of Solomon where the Logos or Wisdom was explicitly described with the stoic *termini technici*. Most notably, the stoic terms *pneuma* and *pneuma noeron* were utilized as attributes of Logos.

The newly founded Christian philosophical school of Alexandria became, soon after the adaptation of Christian philosophy to the Hellenistic and Judaic philosophical-religious traditions, the most important center for the study of Judaeo-hellenistic authors' works. The most notable and famous representatives of that school, Clement of Alexandria and Origen, were largely recurring in their writings to the Judaeo-hellenistic philosophy and hermeneutics. Moreover, the majority of the Judaeo-hellenistic works have been preserved thanks to the citations found in the writings of the Christian philosophers from Alexandria. The notion of Logos here was also playing a definite rôle in the formation of Christian philosophy. In the philosophy of Clement of Alexandria, Logos expresses the following three main activities: a. *Metaphysical,* b. *Ethical* and c. *Epistemological.* Origen borrowed from the Judaeo-hellenistic philosophy, mainly from the philosophy of Philo, rather the hermeneutical principles than the philosophical terms. It is now largely assumed that his tripartite system of biblical hermeneutics, i.e. a. literary, b. moral, and c. spiritual, Origen borrowed from the hermeneutics of Philo. However, some of the essential Christian theological-philosophical terms, such as *eikon* (image), virtues, genus generalissimum etc. were *christianized* by Origen via Judaeo-hellenistic hermeneutical heritage, as well.

The results of our study can open new perspectives for understanding some complicated aspects related to the issues of the formation of early Christian philosophy. It is important that many parts of our research are based on the general studies of the philosophical and hermeneutical sources of Judaeo-hellenism and early Christianity.

**Ананян Артем Сосович**

**Влияние иудеоэллинистической герменевтики на раннехристианскую философию**
**Диссертация на соискание учёной степени кандидата философских наук по специальности 09.00.02 “История философии”**

**Защита состоится 2 ноября 2016г. в 15:00 часов на заседании Специализированного совета Философии и социологии 013 ВАК в Ереванском государственном университете,**
**по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а.**

## РЕЗЮМЕ

Опираясь на принцип исследования иудеоэллинистических и раннехристианских источников, а также лингвистических, исторических и философских особенностей I-III вв. н. е., в данной диссертации мы исследуем тему влияния иудеоэллинистической герменевтики на раннехристианскую философию. В Введении представлены актуальность, методы, проблематика и цель нашей работы, а также проведен анализ научной литературы и философских источников на данную тему. Развиваясь как результат синтеза эллинистической и иудаистической духовной мысли, иудеоэллинистическая герменевтика служила своеобразным идеологическим-богословским мостом для раннехристианской философии, в мерах по аккультурации и адаптации философских и герменевтических принципов античной и эллинистической эпохи. Однако иудеоэллинистический синкретизм не был единственным фактором, так как немалая часть христианских мыслителей I-III вв., независимо от иудеоэллинистической культурной адаптации, была весьма хорошо знакома с философскими и герменевтическими традициями античнo-эллинистической эпохи. Следовательно, во второй части Главы I представляются основные раннехристианские источники в которых влияние греко-римской философско-герменевтической традиции проявлялось без какого-либо посредничества иудеоэллинистической системы.

Таким образом, иудеоэллинизм не только формировался и развивался в религиозно-философских тенденциях своего времени, но также создавал довольно большие проблемы (образовательные, литургические, лингвистические, герменевтические и т.д.) для традиционной иудейской религиозности. В основном доминирование греческого языка в Палестине и в еврейской Диаспоре вызвало фундаментальные перемены в традиционных религиозно-философских мировоззрениях иудаизма. Септуагинта, греческий перевод или скорее версия еврейского Священного Писания, вскоре стала самым ключевым выражением этих перемен, так как для перевода традиционного еврейского религиозного языка на эллинистическую религиозную философию в основном были использованы *termini technici* стоической и перипатетической философий. В этом смысле следует также заметить, что иудеоэллинистические мыслители оставались верны своим монотеистическим убеждениям. Понятие персонифицированной Мудрости или Софии, и даже Логоса, стало самым важным философским термином, с помощью которого, особенно в еврейской диаспоре в Египте, иудеоэллинистические писатели смогли создать почву для развития новой религиозной герменевтики. Понятие персонифицированной Мудрости фигурирует почти во всех произведениях иудеоэллинистических писателей, и в особенности в творениях Филона Александрийского. Интерпретация персонифицированной Мудрости последнего имело также огромное влияние на развитие христианского понимания Логоса в новозаветных книгах, в особенности в Евангелии от Иоанна и в посланиях апостола Павла.

Самые подходящие примеры для изъяснения персонифицированной Мудрости в Септуагинте - это два ветхозаветных перикопа, Книга Притчей 8:1-36 и Книга Премудрости Соломона 6-9. Здесь наилучшим образом видна тенденция иудейских преверженцов эллинистической философской мысли с помощью

стоической интерпретации Логоса создать новую переводческую технику. Идентификация Логоса с персонифицированной Мудростью в Притч. 8:1-36 во многом схожа с философскими идеями иудеоэллинистического мыслителя Аристобула, кому и приписывается греческий перевод Книги Притчей. В книге Премудрости Логос отчетливо описывается терминами стоической философии, как например *pneuma* или *pneuma noeron*.

Вскоре после адаптации христианской философией религиозно-философских традиций иудаизма и эллинизма, христианская философская школа Александрии стала самым важным центром изучения иудеоэллинистических философских произведений. Самые знаменитые представители этой школы Климент Александрийский и Ориген с большим изумлением в своих творениях использовали иудеоэллинистическую философию и герменевтику. Более того, большинство творений иудеоэллинистических писателей сохранились и дошли до нас благодаря цитатам в творениях александрийских христианских философов. Здесь также понятие Логоса играло ключевую роль в создании и в формировании христианской философии.

В философии Климента Александрийского нужно подчеркнуть три основные функции, которые христианский философ приписывал Логосу: 1. *Метафизический, 2*. *Этический* и 3. *Эпистемологический*.

Ориген одолжил у иудеоэллинистических мыслителей, особенно у Филона, скорее герменевтическую модель, чем философские термины и понятия. В наши дни большинство специалистов считают, что свою трёхвидовую систему толкования, т. е. буквальный, моральный и духовный, Ориген взял именно у Филона Александрийского. Однако, многие термины, как eikon (образ), добротолюбие, genus generalissimum (идея Высшего Блага) и т.д. были христианизированы Оригеном.

Результаты данного исследования могут открыть новые перспективы в понимании некоторых сложных аспектов, относящихся к вопросам формирования раннехристианской философии. Очень важно, что в данной диссертации многие аспекты темы рассматриваются в контексте изучения иудеоэллинистических и христианских источников.